

**ԵՂՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ
արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման արդյունքների
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ /2015թ./**

2014-15 ուստարվա պլանով 2015թ. հունվար-փետրվար ամիսներին մասնաճյուղի Հայոց լեզու գրականություն, Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա, Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությունների առկա ուսուցման 47 (համապատասխանաբար 24,14, 9) ուսանողներ մանկավարժական պրակտիկա են անցել մարզի տարբեր հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներում: ՄԿՈԱ բաժինը ՈՒՄԿ-ի պրակտիկաների կազմակերպման և անցկացման բաժնի հետ միասին իրականացրել է մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրություն հարցման միջոցով: Հարցումը պարբերաբար իրականացվում է 2011թ-ից սկսած և նպատակ ունի բացահայտել մեր պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական ու մանկավարժական պատրաստվածության աստիճանը, տրված գնահատականների միջոցով պարզել նրանց ոչ բարձր դրսևորում ունեցող որակները, փնտրել դրանց բարելավման, շտկման և զարգացման նոր մոտեցումներ և մեթոդներ: Կարևոր էր նաև հարցման մասնակից ուսուցիչների կարծիքը պրակտիկայի կազմակերպման գործընթացի վերաբերյալ:

Հարցմանը մասնակցած 33 ուսուցիչներ գնահատել են մեր ուսանողների տեսական գիտելիքների իմացությունը, գործնական հմտությունները, ստեղծագործական ունակությունները, դասավանդման ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողությունները, մասնագիտական խոսքը, թիմում աշխատելու հմտությունները և այլն: Հարկ է նշել, որ հարցման մասնակիցները մեր ուսանողների նշված որակները հիմնականում գնահատել են 5 և 4 բարձր գնահատականներով և ըստ բոլոր առաջարկված հարցերի միջին գնահատականը կազմել է 4.4-4.8, որը բավականին լավ ցուցանիշ է: Առանձնապես բարձր են գնահատել մեր ուսանողների վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը, նրանց թիմում աշխատելու և իրենց լավ կազմակերպիչներ դրսևորելու հմտությունները: Ըստ գնահատականների մեր պրակտիկանտները չեն կարողացել բարձր մակարդակով կիրառել դասավանդման ժամանակակից մեթոդներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինչի մասին ուսուցիչները նշել են նաև առաջարկությունների բաժնում: Այս տեսանկյունից բավականին աշխատանքներ ունեն տանելու դասավանդման մեթոդիկա դասավանդող դասախոսները և մասնավորապես մանկավարժության և հոգեբանության ամբիոնը, որը պետք է համագործակցի բոլոր ամբիոնների հետ փորձի փոխանակման շրջանակներում անցկացնելով համապատասխան դասընթացներ, բաց դասեր և այլն:

ԵՂՀ ԻՄ-ի պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական և մանկավարժական ի՞նչ որակներ կցանկանայիք փոխել հարցին մասնակիցները գրել են հետևյալը.

1. պրակտիկանտները պետք է ուշադրություն դարձնեն իրենց բանավոր խոսքի կազմակերպմանը, բառերի ճիշտ շեշտադրմանը, լինեն առավել ազատ ու անկաշկանդ,
2. ջերմ վերաբերմունքից բացի լինեն առավել պահանջկոտ,
3. ավելի շատ կարդան մեթոդական ուղեցույցներ,
4. երեխային ընդունեն և հասկանան այնպիսին, ինչպիսին որ կա,
5. չբավարարվեն դասագրքային նյութերով, օգտվեն այլ աղբյուրներից, կիրառեն տարբեր մեթոդներ և հնարներ,
6. լինեն ինքնավստահ,
7. հետևեն ուսուցչի դիրքին, դասարանում կեցվածքին, հեղինակությանը և ամենակարևորը՝ ուշադիր լինեն դաստիարակչական ազդեցությանը:

Ի՞նչ առաջարկներ ունեք պրակտիկայի կազմակերպման գործընթացը բարելավելու համար մասնակիցները կատարել են բավականին առաջարկներ.

1. ընդլայնել պրակտիկայի համար նախատեսված ժամանակը,
2. կազմակերպել կարծիքների փոխանակում բոլոր պրակտիկանտներով, որի արդյունքում կգտնվի լավագույնը,
3. ցանկալի մշակել որևէ նախագիծ, որի նպատակը լինի ուսանող-դպրոց-ուսուցիչ կապի ամրապնդումը,

4. ԵՊՀ ԻՄ-ի և դպրոցի համագործակցությունը,
5. պրակտիկայի ղեկավարը ևս լինի դպրոցում (հատկապես ակտիվ պրակտիկայի ընթացքում),
6. իրականացնել պարբերաբար վերահսկողություն, բարելավել պրակտիկայի ղեկավարի ու ուսումնադաստիարակչական հաստատության աշխատողների համագործակցված աշխատանքը,
7. ապահովել մեթոդիստի, մանկավարժական ամբիոնի դասախոսի, դպրոցի առարկայի ուսուցչի սերտ համագործակցությունը, կոորդինացնել նրանց աշխատանքը:

Հարցման արդյունքները կից ներկայացված են: